

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Մարջիկ Վարդանյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը նպաստակային կազմակերպելու հարցը:
4. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ 7-րդ<sup>Ա</sup> դասարանի ղեկավար Մարջիկ Վարդանյանը, որը ներկայացրեց ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր՝ 2019-2020 ուսումնական տարվա համար ձևավորել դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն: Նախագահի թեկնածու առաջադրվեց Տիրուհի Աբրահամյանը : Կատարվեց քվեարկություն: 23 կողմ, 0 դեմ ձայներով ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Տիրուհի Աբրահամյանը:

Որոշեցին.

7-րդ Ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

- |               |         |           |
|---------------|---------|-----------|
| 1. Աբրահամյան | Տիրուհի | /նախագահ/ |
| 2. Խաչատրյան  | Թեհմինե | /անդամ/   |
| 3. Հովակիմյան | Անահիտ  | /անդամ/   |
| 4. Թովմասյան  | Անահիտ  | /անդամ/   |
| 5. Ղազարյան   | Մարիանա | /անդամ/   |

2. Լսեցին - Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Մարջիկ Վարդանյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների լուծման հարցում: Նա հորդորեց ծնողներին՝ աջակցել դպրոցին, ուսուցիչներին՝ պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Դասավանդող ուսուցիչներին և դասղեկին օգնել՝ ձեռք բերելու կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ տեղեր, գրենական պիտույքներ և ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները:

Որոշեցին – Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տեղեր և կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը:

3. Լսեցին - Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը նպատակային կազմակերպելու հարցը:

Դասղեկ Ս. Վարդանյանը նշեց, որ 7-րդ Ա դասարանում կան ծնողագուրկ երեխաներ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ, որոնց գրքերի վարձավճարները տրամադրվում են դպրոցի կողմից: Էքսկուրսիաների, թատրոն, թանգարաններ այցելությունների ժամանակ ԿԳՄՍ նախարարությունը ապահովել է անվճար տոմսերով, սակայն տրանսպորտի և սննդի համար անհրաժեշտ է որոշակի գումար հավաքագրել, նման պարագայում անհրաժեշտ է ապահովել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ներկայությունը: Դա շատ կարևոր է նման ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը կոլեկտիվին, ընկերների հետ շփումները ապահովելու և նրանց տարիքային հոգեբանական զարգացումը ապահովելու համար: Որոշակի գումարային ներդրումներով ավելի ապահով վիճակում գտնվող ծնողները կարող են իրենց երեխաների մոտ ապահովել հասակակիցների նկատմամբ ճիշտ մարդկային հարաբերությունների ձևավորումը, քանի որ դա գտնվում է նաև ծնողական խորհրդի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Որոշեցին -

Անհրաժեշտ օգնություն ցուցաբերել նաև տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ:

4. Լսեցին - Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Ընթացիկ հարցերը քննարկելիս դաստեղծ ներկայացրեց դպրոցի կանոնադրությունը՝ կապված դպրոցական ռեժիմի, դասացուցակի, դասարանում կատարվող հերթապահության և այլ հարցերի վերաբերյալ: Նշվեց, որ դպրոցն աշխատում է հնգօրյա ռեժիմով, դասերն սկսվում են ժամը 9<sup>00</sup>-ին, ավարտվում՝ 15<sup>00</sup>-ին: Նա ծնողներին հորդորեց լինել հետևողական իրենց երեխաների նկատմամբ ժամանակին դպրոց հաճախելու և դասերին միշտ պատրաստ լինելու հարցում, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում:

Պետք է մշտապես պահել ծնող-դաստեղ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու, աշակերտների վարքը և ուսման առաջադիմությունը բարձր մակարդակի հասցնելու համար, որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին ու պայուսակով, դասագրքերով, գրենական պիտույքերով ու աշակերտին վայել հագուկապով:

Որոշեցին .-Առավել ուշադիր և հետևողական լինել անցումային տարիք և հոգեբանական բարդույթներ ունեցող աշակերտների հանդեպ:

Ծնողական խորհրդի նախագահ՝  
Քարտուղար՝

/ *Մ. Կարյան* / Աբրահամյան Տիրուհի /  
/ *Թ. Կարյան* / Խաչատրյան Թեհմինե /